

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՄՇԱԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ ե ն օ Ր Բ ա ղ Ե թ օ Ն Ե Ր Ի Ն յ ա ջ ո Ր ղ ո ղ օ Ր Ե Ր Ե Գ :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. Մ շ ա կ ի տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ. Ա մ ե Ր Ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ Ր օ ղ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա Ր օ կ ա ս տ ա Ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

ՄՇԱԿԻՆ գրվել կարելի է իմ ԲԱՐԱՐԱՍԱՆԸ (Բաղադրանք եւ Բարձրագույն փողոցների
անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Յ ՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Նոյն հարցի մասին. Ներքին ՏԵՍՈՒԹՅԱՆ.
Արտասահման ընկերութեան թաղանթի առի-
թով. Օպերային ներկայացումները. Հրդեհի տե-
ղում. Ներքին լուրեր. ԱՐՏԱՍՏՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹ-
ԻՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. ՊԱՌՆ ԼՈՒՐԵՐ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՏԵՍՈՒԹ-
ՅԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆՆԵՐ.

ՆՈՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մենք հաղորդելովք «Մշակի» մէջ, որ ներ-
կայ 1901 թվականից մեր երկրում մտցնե-
լու է բնակարանային հարկ: Մշակում կան
կարգադրութիւններ արդէն արված են եւ
տանտէրներ պարտաւոր են մինչեւ փետրե-
վարի 1-ը ներկայացնել իրանց տներում
կեցողների ցուցակը: Տանտէրները պարտա-
ւոր են յայտնել, թէ կեցողները ո՞րքան
վճար են հատուցանում իրանց կացարան-
ների համար:

Իւրաքանչիւր տարի պէտք է կազմել
նոր ցուցակ, որովհետեւ փոխվում են կե-
ցողները եւ կացարանների գները: Մինչեւ
անգամ տարվայ ընթացքում կարելի է
փոխել ցուցակը, եթէ տան մէջ եղած
փոփոխութիւնը եղած է մինչեւ մարտի 7-ը,
իսկ յայտնվել է ատենանի մինչեւ ապրիլի
7-ը:

Բնակարանային հարկ պէտք է վճարեն
թէ ուսուցչատան եւ թէ օտարահաշա-
տակ անձինք իրանց բնակարանների հա-
մար, համեմատ վարձարժի. չափին: Եթէ
մար, համար մի մի հարկ չի վերցվի:
Բնակարանային հարկ վճարելուց ազատ
են հողերակալները, ընկերութիւնները,
զանազան հիմնարկութիւնները, հիւրանոց-
ները, բարձրասարանները, պանսիոնները եւ
աշակերտական կացարանները: Ձինւորական
անձինք չեն ազատված հարկից, բայց նը-
րանց վերաբերութեամբ որոշ գիծումներ են
արված:

Մեր ազգայնականութեան համար, որ դեռ
բաւականաչափ զբաղւած չէ եւ չը գիտէ բա-
ւարար կերպով ուսուց լեզուն, արված է
մի թիթեւութիւն՝ ցուցակի թերթերը
ուղղված են նաեւ տեղական լեզուներով:
Նոյն նպատակով լաւ կը լինէր անգրադէտ
տանտէրներին իրաւունք տալ, որ նրանք
կարողանային ներկայանալ ատենանի եւ
բերան աջի յայտնել իրանց տան կեցող-
ների մասին տեղեկութիւններ:

Բնակարանային հարկը պատկանում է
հարկերի այն տեսակին, որ միշտ փոփո-

խութեան է ենթարկվում եւ որի համար
հարկահաւար ատենանը պէտք է գործ-
ունենայ բազմաթիւ եւ բազմատեսակ ան-
ձանց հետ:

Բնակարանային հարկի վերաբերու-
թեամբ դժգոհ անձինք պէտք է իրանց բո-
ղոքները ներկայացնեն նախ քաղաքային
յատուկ ատենանին, եւ եթէ անբաւա-
րան մնան նրանից, այն ժամանակ պէտք է
դիմեն նահանգական ատենանին, իսկ ապա
ֆինանսների մինիստրին:

Ներկայ 1901 թվականը այդ նոր հար-
կի համար փորձնական տարի է:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Բազուի ստակալի աղէտը արդէն սկսել է բա-
րեգործական զգայմունքներ շարժել նաւթային
մայրաքաղաքում: Տեղական լրագիրը մինչեւ
յունվարի 27 ստացել է նուէրներ 2525 ռուբլի:
Հրկիզեալներին անմիջապէս օգնութիւն է
հասցնվում. բաժանվում է հաց, թէյ, չաքար:
Քանի որ զբաղղութեան թողած տպաւորու-
թիւնը դեռ թարմ է եւ ցնցող, կարող ենք հա-
ւատացած լինել, որ աղէտից թշուառացածնե-
րից ոչ մէկն էլ չի մոռացվի. ամենքը կը ստա-
նան ուտելիք, հագուստ, կը ստանան նոյն իսկ
առատ չափով, այնպէս որ առաջին օրերում,
չաբաթներում, գուցէ եւ ամիսներում նրանք
գուցէ եւ համեմատաբար աւելի լաւ դրու-
թեան մէջ կը գտնուեն իրանց, քան աղէտից ա-
ռաջ: Բայց յետոյ: Յետոյ, երբ կը մոռացվի ա-
ղէտը, երբ մարդիկ կը ձանձրանան բարեգոր-
ծութեան անկողնուց: Այդ ժամանակ զբաղղները,
ինչպէս մի քանի տարի առաջ թերեւս հայ
գաղթականները նոյն Բազում, կը թափվեն
փողոցները՝ մուրացկանութիւն անելու: Եւ
միթէ դա կը լինի արդարութիւն: Ի հարկէ,
ոչ: Այս պատճառով մենք շատ արդարացի ենք
գտնում «Новое Обозрение» լրագրի մէջ տպված
մի նամակի նկատողութիւնները: Անա ինչ է
ասում նամակի հեղինակը.

Տեղական լրագիրը ստորագրութիւն բա-
ցեց. ուրիշներն էլ, գուցէ, կը հետեւեն այդ
օրինակին: Կը կազմվեն փողոցի կոմիտեա-
ներ յայտնի անձինքներից, «խնամակալու-
հիւններից եւ խնամակալներից», բայց կը թողն-
վեն թողութիւնները, կը լինեն երկդիմե-
ներ, պարահանդէսներ եւ այլն... Կարօտեալ-
ները չուտով կուշտ կը լինեն, իսկ յետոյ՝
մեռածները կը մոռացվեն, իսկ կենդանի մը-
նացածները կը գնան մուրալու: Հասարա-
կական օգնութիւնը գեղեցիկ բան է, բայց

այսպիսի դէպքերում գործի նշանակութիւն
ունի: Սպիտակ քաղաքի աղէտը բնական
չէր: Այստեղ չը պէտք է բաւականանալ հա-
սարակական օգնութեան դիմելով: Այս դժ-
բաղղութեան մէջ կարելի է եւ պէտք է
որոնել եւ հաստատել պատասխանատու-
թիւնը: Այրվեց մազութի ահագին ամբարը:
Ամբարի վատ չիտութիւնից էր, թէ մի այլ
պատճառից, այրվող մազութը սկսվում է
գուրս թափվել: Ահագին, արագավազ հո-
սանքը լցնում է միակ փողոցը եւ քնակու-
թեան տեղերը բոցավառվում են: Ամեն ինչ,
որ կայ այդ տների մէջ՝ կենդանի, թէ ոչ,
կենդանի, ածուխ է կտրում: Անա այստեղ
էլ հարց է դրվում. ու՞մ մեղն է: Միթէ չէր
կարելի նախատեսել այս զբաղղութիւնը:
Կարելի է թող տալ, որ այսպիսի շտեմա-
րանները տներից այնքան մօտիկ չլին-
վեն: Եթէ այն, արդեօք պարտաւոր չէին
չիտելները եւ նրանք, որոնց պարտաւորու-
թիւնն է հսկել ազգայնականութեան ապահո-
ւութեան վրա, մտածել, որ կարող է հրդեհ
պատահել եւ, հետեւաբար, չիտելն ամբար-
ները այնպէս, որ այրվելու ժամանակ պա-
տեղը չը ձեղքվէին եւ մազութը չը թափվէր
զբաղղ ազգայնականութեան վրա: Եթէ մեղը
նաւթարդիւնաբերողների հարուստ դասա-
կարգի կողմն է, նա, ուրեմն, այնքան հա-
րուստ է, որ կարող է իր անբարեխղճու-
թեան գինը վճարել...

Տարրական արդարութիւնը, ի հարկէ,
հէցն այսպէս էլ պահանջում է: Որ Բոտլիդի
պէս մի զբաղղական հսկայ շատ հեշտ կարող
էր այնպէս չիտել տալ իր ամբարները, որ
մարդկանց մեռաւ չը հասներ՝ այդ մասին կաս-
կածելն անգամ ծիծածելի կը լինէր: Ծիծաղելի
կը լինէր նոյնպէս կասկածել, թէ Պարիզի ֆի-
նանսական առիծը չէ կարող բոլոր զբաղղա-
ցած խեղճներին ապահովել ոչ իբրեւ ողորմու-
թիւն, ոչ, այլ իբրեւ պարտաւորութիւն: Ել
ինչն է արդեւ, որ արդարութիւնը նրան
դատաստանի հարկի է եւ պահանջէ մարդկանց
արեան գինը: Թուում է թէ ոչինչ արեւելք չը
կայ: Բայց յիշեցէ՛ք թէ կապտաւր ինչ ոյժ ու-
նի, ինչեցէ՛ք թէ որպիսի հիշուութեամբ նա
կարողանում է հեռացնել իրանից արդարա-
դատութեան սուրը եւ մնում է անպատիժ:
Դուք կը տեսնէք, որ Բոտլիդի Պարիզի գրա-
սենական կը հրամայէ Բազուի գրասենականին
մի գումար մտցնել յօգուտ հրկիզեալների եւ
այդ «ողորմութեամբ» էլ ամեն ինչ վերջացած
կը համարվի...

ԱՐՏԱՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մենք սովոր ենք առհասարակ ծագելով թիւր-
քանային, ամենաուրապէս Կ. Պօլսի հայե-
րին նրանց անգործունէութեան, հոսոսութեան
համար, բայց մի րօպէ չենք դիտում մեր շուր-
ջը կատարվող երեւոյթները, մի րօպէ չենք
զգում մեր «ըջութեան» կոմիքական դրութիւ-
նը եւ մեր «սառը զգայմունքների» ծիծաղելի
կողմերը:

Իրաւ որ ծիծաղելի. սօփիստական պատճա-
ռաբանութեամբ կամ ծակ փիլիսոփային յա-
տուկ լրջութեամբ տանում ենք ամեն մի պա-
տահար, ամեն մի հարուած՝ միշտ կրկնելով
զգվելի ձեւ ստացած ոճը՝ հանգամանքների
հետ պիտի յարմարվել: Որքան անպատեւեր
եւ պայտարակիլ արդարացողն ու փաստաբա-
նութիւն: Բայց այն, ինչ որ գտնու ճշմարտու-
թիւն է, չենք խոստովանում: Չենք խոստովա-
նում, որ մեր կաշին այլ եւս կոշտացել է, էլ
ոչինչ չէ զգում, որ մեր ներքինը թիկ են
գառել, որ մեր հասարակական ոգին անզգա-
յացել է, եթէ չստեղծ մեռել է: Կարծես ուս-
անայնքիս ոգեւորելու, հասարակական կենա-
քով ապրելու տենչը իսպառ մարել է... Այլա-
պէս ինչպէս բացատրել մեր հիմնարկութիւն-
ների աղքատութիւնը, մեր հոգեւոր դարձմե-
րի ցաւալի, շատ ցաւալի վիճակը, կղերի հետ
մրցելու տկարութիւնը, գրականութեան դան-
դաղ զարգացումը, հայոց թատրոնի անմիւր-
թար վիճակը եւ այլն:

Հայոց թատրոն... որպիսի փառաւոր, փայ-
լուն վիճակ ունէր նա եւ որպիսի անմիւրթար

վիճակի մէջն է այժմ: Ինչքն վերադրել՝ Դե-
րասաններին. յայտնաբեր 10% միայն: Մնա-
ցածը պիտի վերադրել հայ հասարակութեան
ինքնասպան անտարբերութեան: Անա 6—7
տարի է, որ Թիֆլիսը, Կովկասի հայոց մտաւոր
կենտրոնը, իր 70 հազար հայ բնակիչներով չէ
զգում մայրենի բեմի անհրաժեշտութեան կա-
րիքը, խնայում է տարեկան 2,000—3,000
ռուբլի ծախսել եւ մի կանոնաւոր մշտական
խումբ պահել: Միջոցներ չունի. ծիծաղելի է.
հայ դերասանները չեն բաւականացնում նրա
էստետիքական ճաշակին՝ սոսու է: Ոչ, ուղղակի
նա կամ այլանունով է եւ կամ, ինչպէս ասա-
ցինք, կորցրել է ոգեւորվելու սրբազան կրա-
կը, զոհելով ամեն ինչ ժամանային եւ օտարա-
մոլութեան: Գոնէ այս դէպքում օրինակ առ-
նենք մեր հարեւան վրացիներից, որոնք ամե-
նայն ջանասիրութեամբ եւ գովելի եռանդով
առա քսան տարուց աւել է, որ առաջ են տա-
նում իրանց թատրոնական գործը...

Երբ կը լինի մշտական խումբ, երբ թատրո-
նական գործը կը դրվի որոշ, հաստատ հողի
վրա, երբ նա կենթարկվի բեմական օրէնքնե-
րին, երբ դերասաններն իրանց ապահով կը
զգան, այն ժամանակ հարկաւ աւելի եռանդով
եւ աւելի սիրով կը կաշին գործին. ինքն ըստ
ինքեան ըստեղծութեան էլ կը հարստանայ եւ
նոր-նոր ոյժեր էլ երեւան կը գան:

Այս առիթի գրելու առիթը առեց «Մշակի»
ընթերցողներին էլ այն յայտնի լուրը, որ ար-
տիստական ընկերութեան փառահեղ թատրոնի
կառուցումը չուտով կաւարովի եւ նոյն իսկ նա-
խապատրաստութիւններ են տեսնվում փետրվա-
րի սկիզբներին մի հանդիսաւոր ներկայացումով
թատրոնը բանալու: Արդեօք ժամանակ չէ, որ
Թիֆլիսի հայ հասարակութիւնը զարթնի իր
քնից եւ օգուտ քաղէ այդ գեղեցիկ, հոյակապ
թատրոնից եւ մի կանոնաւոր մշտական խումբ
պահէ բոլորովին նոր եւ ժամանակակից ըն-
պէստեարով:

Ամօթ է, բեր անգամ ամօթ Թիֆլիսի հա-
մար, որ յաւակնութիւն ունի ուսուցչների
մտաւոր կենտրոնը լինելու, եւ քսաներորդ
դարի սկզբին չունենայ այնպիսի մի անհրա-
ժեշտ եւ շատ կարեւոր հասարակական հիմ-
նարկութիւն, որպիսի է մայրենի բեմը: Թա-
րօնն է, որ կերտում է մեր հողիները, որ
ազնւացնում է մեր սիրտն ու ճաշակը, որ ապ-
տակում է մեր մոլութիւնները. թատրոնն է,
ուր պիտի լսենք ու սովորենք զուտ գրական
մաքուր, յղկած մայրենի լեզու...

Արդ թող մեր հարուստները, միացած Թիֆ-
լիսի լաւագոյն ինտելիգենցիայի հետ, այժմեա-
նից իսկ մտածեն եկող սեզոնին մի վայելուչ
մշտական խումբ պահելու, որ միաժամանակ
տարվայ որոշ ամիսներին բաւականութիւն տայ
եւ Բազուին եւ գաւառներին:

Դերասան Ա. Յարութիւնեան

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Կիրակի, ամսին 28-ին, արքունական թատ-
րօնում ներկայացրին Վերդիի «Բալետական-
դէս» («Балет-Маскараде») օպերան, որ
գրված է 1862 թվին, այն ժամանակ,
երբ Վերդի իբրեւ առիւծ էր մտնում
յուզված կտորներում իր երաժշտութեան մէջ:
Գլխաւոր դերերը կատարում էին՝ Աստաֆիե-
վա—Ամալիա, Բենէ նրա ամուսինը եւ հերցո-
զի քարտուղար—Կամիլոնի, հերցոգ—Մարկի,
պաժ (մանկավարժ) Օսկար—Անդրէսովսկայ եւ
Գորնօտ—գնչուկ:

Անսամբլը լաւ յարմարված էր, խումբը եւ
օրկեստրը լաւ էին պատրաստված:

Մենք տեսել ենք տ. Աստաֆիեվային շատ
դերերում, ուղղակի կարելի է ասել, որ նա
այս դերում հիանալի էր եւ ամենից աղոյ է
խաղում եւ երգում: Կամիլոնի, ինչպէս միշտ,
այս երեկոյ եւս իր դերումն էր. նա կատա-
րում եւ երգում էր այնքան ազուր, որ միշտ
ուպաւորութիւն էր գործում: Մի քիչ նսնա-
նում էր հերցոգի դերը այն տեղերում, երբ

հարկաւոր էր դրամատիկական եւ ձայնական ոյժ ցոյց տալ: Մարկի թէ լաւ խաղում է եւ թէ լաւ երգում է, բայց ձայնը կարճ է: Աչքի էր ընկնում պատճառով Օսկարի դերում օր. Անդրէեւիկայա. նրա ձայնը շատ մաքուր լիբրելական օսպրաննօ է եւ երգելիս գեղեցիկ հնչում է: Նրա երգած երեք զվարթ արիաններն էլ հասարակութեան ցանկութեամբ կրկնվեցին: Ուրիշ ազատ է եւ հասարակ համապատասխան դերին: Գործնաւոր գնչուհու դերը լաւ տարաւ, մանաւանդ խորոյնի մօտ երգած արիան, որին ծախահարեցին: Հասարակութիւն, քանի որ կիրակի օրվայ ներկայացումն էր, կարելի էր սպասել աւելի շատ: Այժմ ձերի բոլորն էլ իրանց սխալութեամբ «Золушка» օպերայի համար են պահում, որը դրվելու է երեք անգամ միմեանց վրա:

ՀԻՐԵՆԻ ՏԵՆՈՒՄ

Սեւ քաղաք, յունվարի 26-ին

Կասպեան-Չերնոմորեան ընկերութեան (Բոտ-չիլդի) հրդեհը, որի մասին արդէն յայտնի է ընթերցողներին, մի այնպիսի սոսկալի աղէտի փոխվեց, որպիսին երբեք չեն տեսել նախնային աշխարհում եւ որի սրտաշարժ հետեւանքները երկար ժամանակ անշնչելի կը մնան շատերի սրտերում:

Ոչ ոք չէր սպասում, որ ահազին տարածութեան վրա գտնվող կրակի բոցերը բարձրութեան վրայից ցած կիջնեն ընտանեկան տեղը անկոչ հիւրի նման: Եւ այն ժամանակ, երբ օրվայ ծանր խաղը կրած բանուորը դեռ նոր էր սրբում երեսն ու ձեռքերը, որ կնոջ ու երեխաների հետ հացի նստի, երբ խանութպանը շտապով հաց էր կշռում անհամբեր կնոջ համար, որը շտապով էր քաղաքից եկող ամուսնուն իր հիւրերի հետ կերակրելու, երբ մանուկը մօր ծիծը կշտանալու չափ դեռ չէր ծնել եւ շարունակում էր խաղալով իր գործը, ահա այդ հանգիստ, խաղաղ, համեստ կեանքի թելը կարում են վերելից հոսող կրակի ալիքները եւ մի ակնթարթում վերթակէտ դնում կեանքի այդ շարունակութեանը: Որքան յոյսեր, իղծեր, կիսատ գործեր մնացին...

Եւ ահա դեռ մի քանի րոպէ առաջ գերեզմանային լուսութեան մէջ հանգստացող ազգաբնակչութեան մի մասը անշնչանում է, իսկ միւս մասը սուգ ու չիվան բարձրացնելով փախչում է իրան հեռուեղ կրակի հեղեղի առջեւ: Նրանք վազում են. ուր, իրանք էլ չը գիտեն. մի քանի յուսահատական րոպէով դռն էրկուրացնեն իրանց գոյութիւնը. որքան թանգ է, որքան քաղցր է կեանքը... Ամբողջ Սպիտակ քաղաք կոչված թաղը մի ակնթարթում պատերազմական ընտանեկան է ստանում: Սուր լոցները, հրդեհին դիմադրելու պարտաւոր մարդիկ իրանց գոռու-գոռումներով ու բաների եւ բրնձների խուլ շարալիւնով, ալըմոցներ զննելով աղաղակները, աղաղակներ կամ, աւելի ճիշդն առած, մի քանի րոպէ յետոյ այլ-վողները օգնութեան կոչելը, իրանց ծնողներին կորցրած ու վախեցած երեխաների ճիչը եւ աղմուկը—այս բոլորը միասին մի այնպիսի սոսկալի, փշաքաղող, սիրտ կտրատող պատկեր է առաջացրել, որին շատ քնքեր կը կարողանային դիմանալ:

Օտոկի գործարանների ընտանեկանները անմիջապէս ներս են ընդունում լեղապատառ հարեւաններին. շատերը նաւերում, ծովի վրա, դաշտում են ապաստանում. հեռախօսը գործում է տեղալին արագութեամբ. շտապում է գործը կարգ պահպանելու եւ աւերակների տակից դիմելու: Շտապում են բժշկները՝ մակոյտները կորզել բերելու, վիրաւորներին դարմանելու, հառաչանքները սփռելու: Երկու-երեք օր շարունակ ամբողջ քաղաքը համարեալ այնտեղ է: Զուրաբը կրկնապատկել է իր վազմունքը: Ցուրտը, գիծ քամին, բաց դաշտում ու նաւերում ապաստանածների աղաղակները, աղբրանքները մարդկանց սրտերին է համնում, վտանգից հեռու տաք սալօններում ապրող մարդկանց կարեկցութեան է կոչում:

Եւ ինչ ենք տեսնում. ամբողջ գիշերը, մինչեւ լոյս, վիրաւորվածների բանակում անքուն անցկացրած, յոգնած եւ ջարդված քրտնաթոր վատասկաւոր բժիշկն է միւս օրը իր լուսնաուղարկում աղէտի զոհերի համար... Իսկ ինչ են անում Բոտչիլդները, նրանք խօսք ունենալ են: Ինչ են անում նախնային թաղաւորութեան միւս իշխանները. նրանք վարձովի մարդկանց ուղարկում են կրակի հեղեղի առջեւ պատնէշ կազմելու, իրանց շինութիւնները, կերօսները կամ դատարկ ամանները կրակից ա-

զատելու համար... Այդպէս են աշխարհին բաները, այդպէս է արդարութիւնը... Անկողնուց վեր թռած մերկ մօր «ուր է որդի» խելացոր աղաղակը, մի մակոյտ իր աղիոգորմ արցունքներով լացող մօր ողբը՝ «առ իմ Յովհաննէսն է» եւ այլն այնպիսի աղաղակներ քամու նման են անցնում Բագուի իրականութեան առջեւ: Ուրիշայի բարակները, մօտերքում դատարկ խանութները, տները, որտեղ ապաստանել են փախստականները,—շատ քնքեր են այցելում...

Կանչին եւ այս աղէտը: Շատ շուտով կորչեն զոհերի թիւը, վնասների, զրկանքների սահմանները. կը ընկնեն, երեւեն, եւ հրդեհի պատճառներով Յամաուրթեան տիրում է երկու սոսկալի եւ ոչ մի կերպ չարգարացնող մեղադրանք. առաջինն այն է, որ Բոտչիլդի գործարանի զոհերը փակում են այն ժամանակ, երբ կրակից հալածվող մարդիկ ապաստանել են կամեցել այնտեղ, որ ոչ մի կերպ պահապանները չէին համաձայնում զոհերը բանալ, քանի որ վերելից այդպէս է կարգադրված եղել, մինչեւ որ ատրճանակի հարուածները փախցնում են պահապաններին եւ ամբողջ զոհերը կորում են, երբ արդէն ուշ է լինում: Երկրորդը այն է, որ մազութի ամբարը այլ-վիթ՝ գործարանի կառավարիչ Գուրմանը կարգադրել է տակից շուր մեղել ամբարի մէջ... Ինչու, չը գիտենք՝ մինչեւեւ այստեղ ապրող իւրաքանչիւր երեխային իսկ յայտնի է, որ այլ-վող վառարկողները մէջ շուր եղած ժամանակը նա բոլորեցին եւ եւ բարձրանում...

Ի հարկէ, կարող են այս շուրները սխալ լինել, բայց այնպէս յամառութեամբ տարածվել եւ բաւական արժանաւատ աղբիւրներէից լինել չը կտակածելու հիմքեր են տալիս: Այն, ինչ որ ապագային է պատկանում, թողնենք. ներկայ անմիջական եւ մեծածաւալ նպատակ է պահանջում Դիմիտրի, մասնաւորապէս, նոյն իսկ նրանց կենդանի մնացած տէրերը այժմ անխորհրդ են բերան բանալ. արգարութեան կոչելը Արդարութիւն է աղբիւրում նահատակներից մնացած մոլորը, որը այսօր կամ վաղը քամու առջեւ ընկած կը դնայ հեռու—պատմելու այնտեղի մարդկանց մեր ցաւերը եւ նրանցից դարձան աղբիւրներ...

Ռ. Յովհաննէսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, յունվարի 28-ին, Թիֆլիսի «Լուրեր» հիւրանոցում կայացաւ մի հրաժեշտի ճաշիկը: «ԿԱՅԵՅ» լրագրի նախկին խմբագիր Իւրի Միլիտինի մեր երկրից հեռանալու առիթով ձախկերթի ներկայ էին բազմաթիւ անձինք, որոնց մի նշանաւոր մասը պատկանում էր գրական աշխարհին: Ներկայ էին գեներալ Զեյնիով, ցենզուրային առեանի նախագահ Մ. Հակիկէ, Թիֆլիսի աշխատակազմի պարագլուխ իշխան Դ. Միլիտին, քաղաքապետ Գ. Եւսուպով, «ԿԱՅԵՅ», «ՈՆՈ» ՕՅՈՐՔԻՆԵ, «Մշակ», «Ենթոքի Փորցիլի», «Մօսպէճ» լրագրի ներկայիս խմբագիրները, Միլիտինի նախկին աշխատակիցները եւ ուրիշ յարգողներ: Սեղանի թամազան էր Ա. Յովհաննիսեան: Շատերը խօսեցին ճառեր Միլիտինի հասցէին: Այդ ճառերի մէջ չեղումներ էր, որ Միլիտինը պատկանում է այն ունեւորի կարգին, որոնք լայն հայացք ունեն պետութեան եւ ազգութիւնների զարգացման խնդրի վրա եւ որոնք կարողանում են եղբայրական կապ հաստատել պետութիւն կազմող տարրերի մէջ: Ի. Միլիտին իր պատասխան ճառի մէջ ասաց, որ նա ազգերի կապը ընդունել է սիրով եւ ոչ թէ ոյժի մէջ, որ նա միշտ հաւատով է վերաբերվել դէպի ազգերի փոխադարձ յարգանքը եւ եղբայրութիւնը: Նա արտասանեց Տիւրքիլու առաջնապետի մի ոտանաւորը, որտեղ յայտնված էր սիրով հաղափարի ոյժը, որ կարող էր հասցէին համակրական խօսքեր ասելուց յետոյ առաջարկեց Կովկասի եւ կովկասցիների բարդաւանման բաժակը: ձախկերթի մկավից ժամի 3½-ին եւ վերջացաւ 6-ին:

Կիրակի, յունվարի 28-ին, Թիֆլիսի Կրոմօսկի դահլիճներում կայացաւ «Rouge et Noir» պարահանդէսը, որ կազմել էր բանտերի խնամակալութեան Թիֆլիսի կանանց բաժանմունքը յօգուտ այդ խնամակալութեան եւ աղբիւրների զուգակներին ապաստարանի: Պարահանդէսը, որ դրաւել էր մեծ բազմութիւն, անցաւ բաւական աշխույժ, որով հասցէին վերջում Հասարակութիւնը ցրվեց շատ ուշ:

Այսօր, յունվարի 30-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի 2-րդ քրէական բաժնում քննվելու է Թիֆլիսի մէջնանների վարչութեան

նախկին աւագ իսպ Արքանաւանի, նոյն վարչութեան նախկին գործադիր Նիկ. Բելազովի եւ նոյն վարչութեան գրագիր Դմ. Կուրչովի գործը: Ներքէն էլ մեղադրվում են պաշտօնական կեղծիք գործելու մէջ, իսկ պ. Արքանաւան, բացի դրանից, եւ իր իշխանութեան սահմանները գերազաւում մէջ: Այդ գործը նշանակված էր անցնել տարվայ դեկտեմբերի 4-ին, բայց յետաձգվեց մեղադրեալ Բելազովի եւ մի քանի վիճակների բացակայութեան պատճառով:

Մեզ հաղորդում են, որ ուրբաթ, փետրվարի 2-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ մի հետաքրքիր կօնցերտ յօգուտ 2-րդ էժանագին գրադարանի եւ նրա Հաւաքարանի բաժանմունքի: Կօնցերտին մասնակցելու են Իւ. Սպենդիարեան, Ն. Տուրաբով, Օ. Միլիտին, Վ. Ամիրաջիբի, եւ պ.պ. Մ. Վասիլիսի, է. Բրօշի, Ա. Բուլ, Ն. Բլաւտով, Ա. Չալիկեան:

Բագուի նահանգապետի կարգադրութեամբ կազմված է մի քննիչ յանձնաժողով, որ պիտի պարզէ, թէ ինչ վնասներ է տուել Սպիտակ քաղաքի հրդեհը: Արդէն սկսել են պեղումներ անել այդտեղ տների փլատակներում եւ հաց ու փորձ են անում հրդեհից ազատվածներից թէ ինչ վնասներ են կրել նրանք: Առ այժմ ցուցակագրված են 122 հրկիզեալներ, որոնք իրանց այրված գոյքերը հաշուում են 12 հազար րուբլի:

Յունվարի 21-ին Պետերբուրգում կայացել է մասնագետների երեկոյթ: Ահա թէ ինչպէս է նկարագրում այդ երեկոյթը «НОВОСТИ» լրագիրը. «Արեւելեան տիպի բազմաթիւ ջանքի ղեկներ, նոյն տիպի հասարակաւոր մարդիկ, ֆէստեր, «Էլիտաների» ոսկեկար եւ արծաթակար երմօլաներ, հայկական, վրացական եւ այլ ազգային հայրենասեր, չաղներ, ուսանողական համագործակցող, օֆիցէրներ, քաղաքի սերունդները մարդիկ—այդպէս էր այն երեկոյթի նախընթաց պատկերը, որ կազմել էին ի նպատակ մասնագետական ընկերութեան աշխատակազմի ժողովարանում յունվարի 21-ին, որին couleur locale (տեղական ընտանեկան) էին տալիս, բայց վերեւ մի-շաժից, մի քանի քիտիկներ, որոնք մեծ ճաշկով զարգացված էին արեւելեան ոգով, ուր ստան խմիչքները, չամպայնը եւ «քոստալիս»-ն» զանազան պատկանելիքները ծախում էին գեղեցիկ մուսիլմանուհիները: Հիւրաներեւելեաներից մէկը փոխարկված էր արեւելեան սենսակի, որի մի անկիւնը ներկայացնում էր արեւելեան սրճարան. այդտեղ ծախում էին Թիւրքական համեղ սուրճ, Երեկոյթի կարգադրիչները կարողացել էին հետաքրքիր կերպով կազմել եւ երաժշտական մասը, որին սիրով մասնակցում էին մի քանի սիրված արտիստներ: Նկարիչ պ. Կուրչովը մեծ ճաշկով դրել էր երկու գեղեցիկ կենդանի պատկերներ: Երաժշտական մասի վերջում, մեր եւրօպական աւանջների համար մի փոքր մօնօտօն ազգային գործիքների հնչունների ճանապարհները կատարելիքն ազգային հայրենասիրով ընտրող պարեր, որոնց մէջ աչքի ընկան մի էֆֆէլեւտուր չէրեզդուհի, որը զարմանալի նազաշարժութեամբ պարեց, եւ 10—12 տարեկան մի տղայ, որը շատ գեղեցիկ պարեց խնջալներով: Կենդանի եւ հետաքրքիր երեկոյթը վերջացաւ առաւօտեան 4 ժամին:

«ԿԱՅԵՅ» լրագրից չաբաթ օր մեր լրագրում քաղված լուրը սխալ է եղել հաղորդված. վերոյիշեալ լրագրի խմբագրութիւնը շտապում է ուղղել այդ սխալը. փոխանակ «Սարի-Մագէ-րամ-բէկը սպանեց» խօսքերը, պէտք է կարդալ «պանվեց Սարի-Մագէրամ-բէկը»:

«Варш. Дн.» լրագրում կարդում ենք. Հրատարակված է Վարշավայի ընդհանուր նահանգապետի հետեւեալ պարտաւորական որոշումը, 1900 թվ. ապրիլի 11-ին Բարձրագոյն հաստատված միջնատրների կոմիտէի կանոնադրութեան հիման վրա: «Յայտնում եմ ի պատճառ, որ տեղեկվում են ժողովրդի գումարումները եւ ժողովները փողոցներում, հրապարակներում եւ այլ հասարակական տեղերում հասարակական կարգի եւ հանգստութեան դէմ խորհրդակցութիւններ եւ գործողութիւններ կատարելու համար: Ոստիկանութեան պահանջով վերոյիշեալ գումարումները եւ ժողովները պարտաւոր են անյապաղ ցրվել. անհնազանդութեան դէպքում ոստիկանական միջոցներով կը ցրվեն նրանք, ընց»:

Իսկ եթէ ոստիկանական միջոցները անբաւարար կը լինեն, զինուորական ոյժեր կը գործ դնվեն: Այդ որոշումն խախտողները բանտարկութեան կենթարկվեն մինչեւ երեք ամիս կամ դրամական տուգանքի մինչեւ 500 ռուբլի, ներկայ որոշումը օրինական ոյժ է ստանում: պատշաճաւոր կարգով հրատարակելուց յետոյ եւ տարածվում է Վարշավա քաղաքի եւ Լեհաստանի Թագաւորութեան բոլոր նահանգների վրա:

Երկրագործութեան դեպարտամենտը հաղորդեց Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեանը, որ երկրագործութեան միջնատր համաձայնութիւն է տուել կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ցուցահանդէսի կազմակերպութեան Թիֆլիսի այդգործական ուսումնարանի այգում եւ այն հողաբաժինների վրա, որոնք կից են այդ այգուն:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, թէ Մօսկվայի ինժեներական դպրոցին, որ գտնվում է հաղորդակցութեան ճանապարհներին միջնատրութեան վարչութեան տակ, կը տրվեն հաղորդակցութեան ճանապարհների ինժեներների ինստիտուտի իրաւունքներ, այսինքն այն անձինք, որոնք կաւարտեն այդ ուսումնարանը, կը ստանան հաղորդակցութեան ճանապարհների ինժեների կոչումն:

Չինուորական-բժշկական ակադեմիայի կառավարիչ, նորերս վախճանված Պաշտօնի փոխանակ, նշանակված է նոյն ակադեմիայի պրօֆէսոր Ա. Ի. Տարեկեցիկ:

ԱխԱՆԻՍԹԻՑ մեզ գրում են. «Անցեալ շաբաթ, քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու ծխականները եւ քննիչ մասնագետով կողմից մի պատգամաւորութիւն ներկայացաւ Թիֆլիսի վեհապալա Կաթողիկոսին՝ երէցփոխի գործած գեղծումների մասին բողոքելու: Ինչպէս լսեցինք, վեհապալա ցաւակցութիւն է յայտնել արդար բողոքը: Դաւիթ Սուրբ քահանայաւորի միջոցով կատարեցին հրաժարականի պատճառով, կօստիտօրիայի կարգադրութեամբ, շուտով այստեղ կը գայ Բաթումի քահանայ Միլեանց, որպէս լրագոր քննիչ երէցփոխի գործերի»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 24-ին, գիշերը ժամը 3-ին, թոյլ երկրաշարժ պատահեց այստեղ, որը ուղղութիւն ունէր հիւսիսից դէպի հարաւ եւ մի վայրկեանից քիչ տեւեց: Երկրաշարժն անշնչաւ անցաւ. տների զանգեր միայն ձնածաղկի եւ զարկերիցն քնած մարդկանց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, յունվարի 15-ին
Պարսկական նոր սեւ փողերն արդէն չը շահաւորութեան մէջ են մտցրել: Պատրաստված լինելով նիկէլից, այս նոր փողերը շատ թեթեւ են եւ յարմար գործածութեան համար: Բացի դրանից գեղեցիկ էլ են: Նոր փողերը այն առաւելութիւնն ունեն, որ ոչ մի դէպքում դրանց գինը ոչ բարձրանալու եւ ոչ էլ կտոր վելու յոյս չը կայ, որովհետեւ այն գինը, որ նշանակված է դրանց վրա, հէց մեծաւի արժէքն է: Այսպէս, օրինակ, մի մօխալ նիկէլն արժէ մի շահի եւ հէց մի շահին մի մօխալ է: 2 շահին 2 մօխալ:

Յայտնի է, որ պարսից «զարաբխանան» (դրամահատարանը) կապալով է տրվում այն մարդկանց, որոնք առաջարկված կապալադրամը կանխիկ վճարում են, որից յետոյ որքան իրանց կամքն է կամ որքան մեծում ունեն այնքան էլ փող են դուրս թողնում իրանց օգտի համար: Եւ դրանից պատրաստված փողը կրկնակի օգուտ էր բերում: Կապալաւորները, օգտվելով այդ բանից, ամեն կերպ աշխատում էին սեւ փող դուրս թողնել—օգուտ ստանալ: Այդ էր պատճառը, որ սեւ փողի չափազանց բազմաշաղկապ արգելաւորութիւնը այլ եւս սեւ փողի կարեն արգելաւորութեան համար ստիպված եղաւ նախ 2 շահին, ապա 3-ը մի շահի յայտարարել եւ հաւաքել տալով իրեն մեծաւ ծախել: 2-ը նախ յետոյ դրան, այժմ էլ դեռ մեծ քանակութեամբ ինչ փող կայ: Շատ պարզ է, որ այս ֆինանսական անկայուն վիճակը թէ իրան կառավարութեան եւ թէ ժողովրդին մեծ վնաս հասցը ընց»:

Սիրտ
ներքին
գալիս
անկիւն
են մու
վատե
յարկից
ներքին
այն դ
են գա
րութի
մերկ
ձիւնի
թիւն
միւր
երկու
առած
ձեռքեր
նուս
նուկն
հալման
րիւն
ընկած
միւս
միւս
երկու
սան
են փող
այնքան
են դար
ուշադ
մոլ չը
Այդ
անցնել
այնքան
միւս
դարձ
սրտեր
առաքի
արկու
անցն
ծաղու
այդ թ
իրանց
ծաղու
իւրան
ձաղը
փողից
միւս
չալու
թլուա
ակամ
ապրի
նու
Իր
ներքին
գալիս
անկիւն
են մու
վատե
յարկից
ներքին
այն դ
են գա
րութի
մերկ
ձիւնի
թիւն
միւր
երկու
առած
ձեռքեր
նուս
նուկն
հալման
րիւն
ընկած
միւս
միւս
երկու
սան
են փող
այնքան
են դար
ուշադ
մոլ չը
Այդ
անցնել
այնքան
միւս
դարձ
սրտեր
առաքի
արկու
անցն
ծաղու
այդ թ
իրանց
ծաղու
իւրան
ձաղը
փողից
միւս
չալու
թլուա
ակամ
ապրի
նու
Իր

